ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 1, 2015 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 551.58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ [1*], Ա. Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ [2]

[1] *ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան*
[2] *Կապանի թիվ 9 ավագ դպրոց, Հայաստան*

Վերջին երկու տասնամյակում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները զգալի տեղաշարժեր առաջացրել են Հայաստանի բնակչության թվաքանակի ու կառուցվածքի, տեղաբաշխման, տարաբնակեցման, ժողովրդագրական իրավիճակի և այլ ոլորտներում: Թվարկված խնդիրներն առավել ցայտուն են դրսևորվում գյուղական բնակավայրերում: Հոդվածում դիտարկվում են 2005–2013թթ. գյուղական բնակչության վերարտադրության տարածաշրջանային առանձնահատկությունների փոփոխության դինամիկան և դրա հետևանքով առաջացած հիմնախնդիրները:

***Keywords*:** demographic situation, rural settlement, social-cultural changes.

Անցած, ավելի քան կես դարում, գյուղական բնակչության ծնելիության բացարձակ ցուցանիշը ՀՀ-ում նվազել է 2,8, իսկ հարաբերական ցուցանիշը՝ մոտ 3,5 անգամ: Դրան հակառակ, տեղի է ունեցել գյուղական բնակչության մահացության բացարձակ և հարաբերական ցուցանիշների աճ, տեղի ունեցած փոփոխությունների մասին հանգամանալից պատկերացում են տալիս աղյ. 1-ում բերված տվյալները: Եթե մահացության բացարձակ ցուցանիշի աճն ինչ որ չափով պայմանավորված է գյուղական բնակչության բացարձակ թվի ավելացումով (1960–2013 թթ. ընթացքում գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է մոտ 1,3, իսկ մահացության բացարձակ թիվը՝ 1,5 անգամ), ապա գյուղական բնակչության մահացության հարաբերական ցուցանիշի աճը պայմանավորված է սոցիալական պայմաններով, գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակում տեղի ունեցած փոփոխություններով և ժողովրդագրական գործընթացներով: 2013 թ. դրությամբ ՀՀ գյուղական բնակչության մահացության գործակիցը 1970 թ. համեմատությամբ ավելացել է 3,4 պրոմիլային կետով կամ մոտ 63%-ով: Ծնելիության և մահացության ցուցանիշների վերը նշված փոփոխությունների պատճառով 2013 թ. ՀՀ-ի գյուղական բնակչության բնական հավելաճի գործակիցը կազմել է ընդամենը 4,7‰, որը 1960 թ. համեմատությամբ պակաս է 8,4 անգամ:

* E-mail: aksel.potosyan@yandex.ru

Աղյուսակ 1

ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները (1960–2013 թթ.) [1]

Տարի-ներ	Ծնված-ներ	Մահա-ցածներ	Բնական հավելաճ	Գործակիցը (1000 բնակչի հաշվով), ‰			
				ծնելիու-թյուն	մահա-ցություն	բնական հավելաճ	ՀՀ գյուղական բնակչ. թիվը (հազ.)
1960	42509	6591	35918	46,6	7,2	39,4	892,2
1970	23980	5445	18535	23,7	5,4	18,3	1019,9
1980	26327	6609	19718	25,1	6,3	18,8	1058,1
1990	29738	7292	22446	27,0	6,7	20,3	1098,1
1995	19829	8079	11750	18,1	7,4	10,7	1093,9
2000	12886	8343	4543	11,4	7,3	4,1	1131,1
2005	13737	9251	4486	11,9	8,0	3,9	1153,5
2006	13846	9513	4333	12,0	8,2	3,8	1156,6
2007	14586	9617	4969	12,6	8,3	4,3	1157,0
2008	15009	9961	5048	12,9	8,6	4,3	1159,6
2009	16153	10127	6026	13,9	8,7	5,2	1164,6
2010	16562	10083	6479	14,1	8,6	5,5	1156,6
2012	15357	9996	5361	13,8	9,0	4,8	1108,7
2013	14992	9803	5189	13,5	8,8	4,7	1109,4

Աղյուսակ 1-ի տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ՀՀ գյուղական բնակչության վերարտադրության գործընթացում, առավել ինտենսիվ փոփոխություններ են տեղի ունեցել 1990-ական թվականներից հետո: 1990–2013 թ. ընթացքում ՀՀ գյուղական բնակչության ծնելիության գործակիցը նվազել է ուղիղ 2,0 անգամ: Այդ ընթացքում բնական հավելաճի գործակիցը պակասել է 4,3 անգամ: Առավել անհանգստացնող է մահացության ցուցանիշում տեղի ունեցած փոփոխությունը: 1990–2013 թթ. ընթացքում գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է ընդամենը 1,01 անգամ, սակայն տեղի է ունեցել մահացության գործակցի և բացարձակ թվի էական ավելացում: Առաջինն ավելացել է 2,1 պրոմիլային կետով, իսկ երկրորդը՝ շուրջ 1,4 անգամ:

2005–2013 թթ. ընթացքում ՀՀ-ում գյուղական բնակչության միջին տարեկան բնական հավելաճը կազմել է 5236 մարդ, իսկ բնական հավելաճի միջին տարեկան գործակիցը՝ 4,6‰: Վերջինս այդ ընթացքում ավելացել է ընդամենը 0,8‰-ով: Աղյուսակ 1-ից երևում է, որ դա հիմնականում տեղի է ունեցել այդ ընթացքում ծնելիության գործակցի 1,6 պրոմիլային կետով ավելացման շնորհիվ, քանի որ բնական հավելաճի վրա ազդող մյուս գործոնը՝ մահացության գործակիցն այդ ժամանակահատվածում ոչ միայն չի նվազել, այլ ավելացել է 0,8-ով, իսկ 2000 թ.-ի համեմատությամբ ՀՀ գյուղական բնակչության մահացության միջին տարեկան գործակիցն ավելացել է 1,5‰-ով կամ ավելի քան 20,5%-ով:

Մարզային կտրվածքով 2005–2013 թթ. ընթացքում ՀՀ գյուղական բնակչության վերարտադրության ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ.

- բացի Սյունիքից, մնացած բոլոր մարզերում տեղի է ունեցել գյուղական բնակչության ծնելիության գործակցի ավելացում, իսկ բնական հավելաճի գործակցի ավելացում տեղի է ունեցել բացի Սյունիքից, Կոտայքից և Տավուշից մնացած բոլոր մարզերում;
- ծնելիության գործակցի առավել բարձր՝ 2‰-ից ավելի աճ են ունեցել Արագածոտնի, Արարատի, Լոռու և Շիրակի մարզերը;
- բնական հավելաճն առավել մեծ չափով ավելացել է Շիրակի մարզում (2,4‰), իսկ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու և Վայոց ձորի մարզերում այն տատանվում է 0,8–1,5‰-ի սահմաններում (աղյ. 2);

▪ բնական հավելաճի գործակիցը նվազել է Սյունիքի, Տավուշի, և Կոտայքի մարզերում, որոնք բացի Կոտայքից, ունեն ծայրամասային և սահմանամերձ դիրք և ՀՀ կենտրոնական-հարթավայրային մարզերի համեմատությամբ գյուղատնտեսության զարգացման նվազ հնարավորություններ, գյուղական բնակավայրերի ապահովվածությունն ենթակառուցվածքային և սոցիալական ծառայություններով ավելի թույլ է քան նախորդներում և վերջապես նախորդներին զգալիորեն զիջում են գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակով;

▪ բացառությամբ Գեղարքունիքի, մնացած բոլոր մարզերում տեղի է ունեցել մահացության գործակցի ավելացում, որն առավել մեծ է Լոռու, Սյունիքի, Տավուշի և Կոտայքի մարզերում (աղյ. 2) և կազմում է 1,1–2,4 պրոմիլային կետ:

Երևանում և մարզկենտրոններում 2005-2013 թթ. բնակչության վերարտադրության բաղադրիչների շարժընթացը հիմնականում համահունչ է մարզերում կամ տարածաշրջաններում գյուղական բնակչության վերարտադրության բաղադրիչների շարժընթացին (աղյ. 2, 3): Մարզկենտրոններից բնակչության բնական հավելաճի նվազում եղել է Վանաձորում, Կապանում, Իջևանում և Եղեգնաձորում, իսկ մարզերից՝ Կոտայքում, Սյունիքում և Տավուշում [2]:

Ըստ մարզերի և տարածաշրջանների ՀՀ գյուղական բնակչության 2013 թ. բնական շարժի ցուցանիշների միջև կան նկատելի տարբերություններ: *Ծնելիության գործակցի ՀՀ միջինից (13,5 ‰) բարձր ցուցանիշ ունեն Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու և Արարատի մարզերը:* Ծնելիության համեմատաբար բարձր ցուցանիշով առանձնանում են նաև Արարատի, Սևանի, Ախուրյանի, Սպիտակի, Տաշիրի, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանները, որոնցում գյուղական բնակչության ծնելիության գործակիցը բարձր է 15‰-ից:

Ծնելիության գործակցի առավել ցածր ցուցանիշ ունեն Մեղրու (6‰), Տավուշի (9,3‰), Կապանի (10,9‰) և Կրասնոսելսկի (9,2‰) տարածաշրջանները: Դրանցում գյուղական բնակչության բնական հավելաճի փոփոխությունը 2005–2013 թթ. եղել է բացասական: ՀՀ մարզերից հինգում գյուղական բնակչության ծնելիության գործակիցը ցածր է ՀՀ միջին ցուցանիշից, մնացած հինգում՝ բարձր: Բացի Կոտայքից և Արմավիրից մնացած երեք մարզերը, որոնք գյուղական բնակչության ծնելիության ցուցանիշով զիջում են ՀՀ միջին ցուցանիշին, առանձնանում են սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով, ունեն մեծ թվով սահմանամերձ գյուղական համայնքներ, աչքի են ընկնում մակերևույթի առավել խիստ մասնատվածությամբ և բարձրաչափական նիշերի մեծ լայնույթով, հեռու են ընկած մայրաքաղաքային գոտուց և գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությամբ զիջում են ՀՀ միջին ցուցանիշին (բացի Տավուշի մարզից):

Նշված մարզերի մեջ մտնող տարածաշրջաններից բացի գյուղական բնակչության ծնելիության ՀՀ միջին ցուցանիշից ցածր ցուցանիշ ունեն նաև Գավառի, Կրասնոսելսկի, Վարդենիսի, Մասիսի, Էջմիածնի, Գուգարքի, Թումանյանի, Ստեփանավանի և Արթիկի տարածաշրջանները:

ՀՀ միջին ցուցանիշից գյուղական բնակչության մահացության գործակիցը ցածր է Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի, Շիրակի, Արագածոտնի և Արարատի մարզերում, իսկ Տավուշի, Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերում այն բարձր է ՀՀ միջինից: ՀՀ գյուղական բնակչության մահացության գործակիցն առավել ցածր է Մարտունու, Բաղրամյանի, Գավառի, Ապարանի և Ամասիայի տարածաշրջաններում և չի անցնում 7,4‰-ից: Կապանի, Կրասնոսելսկի, Մեղրու, Թումանյանի և Տավուշի տարածաշրջաններում այդ ցուցանիշը մինչև 2 անգամ գերազանցում է վերը նշված տարածաշրջաններին:

Աղյուսակ 2

ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ մարզերի և տարածաշրջանների (2005–2013 թթ.) [1]

Մարզեր և տարածաշրջաններ	2005			2013			Փոփոխությունը 2005–2013 թթ.		
	Ծ	Մ	Բա	Ծ	Մ	Բա	Ծ	Մ	Բա
Արագածոտնի մարզ	**12,5**	**7,7**	**4,8**	**14,5**	**8,4**	**6,1**	**2,0**	**0,7**	**1,3**
Աշտարակի	11,6	7,4	4,2	14,8	8,8	6,0	3,2	1,4	1,8
Ապարանի	12,5	8,6	3,9	14,4	7,1	7,3	1.9	–1,5	3,4
Թալինի	12,2	8,1	4,1	14,1	8,7	5,4	1,9	0,6	1,3
Արագածի	15,5	6,2	9,3	14,3	7,9	6,4	–1,2	1,7	–2,9
Արարատի մարզ	**11,5**	**7,9**	**3,6**	**13,8**	**8,7**	**5,1**	**2,3**	**0,8**	**1,5**
Արտաշատի	11,2	8,2	3,0	13,7	9,6	4,1	2,5	1,4	1,1
Արարատի	13,0	7,3	5,7	15,4	7,7	7,7	2,4	0,4	2,0
Մասիսի	10,5	8,0	2,5	12,3	8,6	3,7	1,8	0,6	1,2
Արմավիրի մարզ	**12,1**	**7,3**	**4,8**	**13,4**	**7,8**	**5,6**	**1,3**	**0,5**	**0,8**
Արմավիրի	12,3	7,6	4,7	14,1	8,3	5,8	1,8	0,7	1,1
Բաղրամյանի	13,1	5,4	7,7	14,1	6,6	7,5	1,0	1,2	–0,2
Էջմիածնի	11,7	7,4	4,3	12,7	7,8	4,9	1,0	0,4	0,6
Գեղարքունիքի մարզ	**13,5**	**7,3**	**6,2**	**13,6**	**7,2**	**6,4**	**0,1**	**–0,1**	**0,2**
Գավառի	13,2	7,5	5,7	12,9	6,8	6,1	–0,3	–0,7	0,4
Կրասնոսելսկի	11,0	13,4	–2,4	9,2	12,4	–3,2	–1,8	–1,0	–0,8
Մարտունու	13,8	6,0	7,8	13,9	6,3	7,6	0,1	0,3	–0,2
Սևանի	13,1	7,1	6,0	15,4	8,8	6,6	2,3	1,7	0,6
Վարդենիսի	13,5	8,4	5,1	13,3	7,7	5,6	–0,2	–0,7	0,5
Լոռու մարզ	**10,2**	**9,1**	**1,1**	**13,7**	**11,5**	**2,2**	**3,5**	**2,4**	**1,1**
Գուգարքի	11,7	8,2	3,5	12,6	12,1	0,5	0,9	3,9	–3,0
Թումանյանի	7,5	8,4	–0,9	12,2	13,7	–1,5	4,7	5,3	–0,6
Սպիտակի	9,9	8,8	1,1	16,1	9,5	6,6	6,2	0,7	5,5
Ստեփանավանի	9,2	10,8	–1,6	12,2	11,4	0,8	3,0	0,6	2,4
Տաշիրի	12,9	9,6	3,3	15,3	10,4	4,9	2,4	0,8	1,6
Կոտայքի մարզ	**11,6**	**7,6**	**4,0**	**12,4**	**8,7**	**3,7**	**0,8**	**1,1**	**–0,3**
Հրազդանի	12,0	7,9	4,1	14,5	10,5	4,0	2,5	2,6	–0,1
Կոտայքի	11,8	8,2	3,6	11,8	8,6	3,2	0,0	0,4	–0,4
Նաիրիի	10,9	6,6	4,3	12,2	8,0	4,2	1,3	1,4	–0,1
Շիրակի մարզ	**12,1**	**7,6**	**4,5**	**15,2**	**8,3**	**6,9**	**3,1**	**0,7**	**2,4**
Ախուրյանի	11,0	7,4	3,6	16,9	8,4	8,5	5,9	1,4	4,9
Ամասիայի	9,0	6,2	2,8	17,2	7,4	9,8	8,2	1,2	7,0
Աշոցքի	16,9	8,7	8,2	17,7	8,5	9,2	0,8	–0,2	1,0
Անիի	14,2	6,6	7,6	14,9	9,8	5,1	0,7	3,2	–2,5
Արթիկի	11,9	8,2	3,7	12,3	7,8	4,5	0,4	–0,4	0,8
Սյունիքի մարզ	12,4	9,0	3,4	11,2	10,8	0,4	–1,2	1,8	–3,0
Կապանի	11,9	9,8	2,1	10,9	13,2	–2,3	–1,0	3,4	–4,4
Գորիսի	13,9	8,4	5,5	11,8	9,7	2,1	–2,1	1,3	–3,4
Մեղրու	6,5	15,4	–8,9	6,0	15,9	–9,9	–0,5	0,5	–1,0
Սիսիանի	11,6	8,5	3,1	11,5	103	1,2	–0,1	1,8	–1,9
Վայոց ձորի մարզ	11,4	9,8	1,6	12,8	10,0	2,8	1,4	0,2	1,2
Եղեգնաձորի	10,9	9,4	1,5	12,9	10,3	2,6	2,0	0,9	1,1
Վայքի	11,8	10,0	1,8	12,5	8,8	3,7	0,7	–1,2	1,9
Տավուշի մարզ	**11,5**	**9,8**	**1,7**	**12,2**	**11,3**	**0,9**	**0,7**	**1,5**	**–0,8**
Իջևանի	12,8	9,1	3,7	14,1	10,3	3,8	1,3	1,2	0,1
Նոյեմբերյանի	10,8	9,2	1,6	11,9	10,4	1,5	1,1	1,2	–0,1
Տավուշի	10,3	11,5	–1,2	9,3	14,1	–4,8	–1,0	2,6	–3,6
ՀՀ–ում	**11,9**	**8,0**	**3,9**	**13,5**	**8,8**	**4,7**	**1,6**	**0,8**	**0,8**

Աղյուսակ 3

Երևան քաղաքի և մարզկենտրոնների բնակչության բնական շարժի ցուցանիշները, ‰ (2005–2013 թթ.) [1]

Երևան և մարզկենտրոններ	2005			2013			Փոփոխությունը 2005–2013 թթ.		
	Ծ	Մ	Բա	Ծ	Մ	Բա	Ծ	Մ	Բա
Երևան	11,1	8,3	2,8	14,4	8,6	5,8	3,3	0,3	3,0
Գյումրի	11,4	10,2	1,2	13,3	12,1	1,2	1,9	1,9	0,0
Վանաձոր	12,6	9,8	2,8	12,8	12,5	0,3	0,2	2,7	–2,5
Աշտարակ	12,4	9,3	3,1	14,5	10,4	4,1	2,1	1,1	1,0
Արտաշատ	10,5	7,5	3,0	15,1	9,6	5,5	4,6	2,1	2,5
Արմավիր	13,8	8,9	4,9	16,6	11,3	5,3	2,8	2,4	0,4
Գավառ	12,0	8,8	3,2	14,6	10,2	4,4	2,6	1,4	1,2
Հրազդան	10,7	6,9	3,8	14,8	8,8	6,0	4,1	1,9	2,2
Կապան	8,9	7,5	1,4	8,8	7,8	0,4	–0,7	0,3	–1,0
Եղեգնաձոր	12,9	6,8	6,1	13,7	8,3	5,4	0,8	1,5	–0,7
Իջևան	10,9	7,2	3,7	10,2	8,1	2,1	–0,7	0,9	–1,6
Միջինը ՀՀ-ում	11,7	8,2	3,5	13,8	9,0	4,8	2,1	0,8	1,7

Մահացության գործակցի բարձր ցուցանիշով առանձնանում են նաև Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները, որտեղ այն տատանվում է 11,4–12,1‰ սահմաններում: ՀՀ մնացած տարածաշրջանների գյուղական բնակչության մահացության գործակցի մանրամասն վերլուծությունը բերված է աղյ. 2-ում, համաձայն որի *մահացության գործակիցն առավել բարձր է ՀՀ այն տարածաշրջաններում և գյուղական համայնքներում, որտեղ հանրապետության մասշտաբով ցածր է ծնելիության գործակիցը:* Պատճառն այդ տարածաշրջանների գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների մասնաբաժնի ավելացումը՝ և երիտասարդ տարիքի բնակչության նվազումն է: Վերջինս բացատրվում է այդ տարածաշրջանների գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման նվազ հնարավորություններով, գյուղատնտեսության ցածր ապրանքայնությամբ, աշխատատեղերի խիստ սահմանափակ հնարավորություններով և այդ ամենի պատճառով երիտասարդների միգրացիայով դեպի հանրապետության կենտրոնական տարածաշրջաններ, մայրաքաղաք Երևան կամ էլ արտերկիր:

Ծնելիության համեմատաբար ցածր և մահացության բարձր գործակից ունեցող տարածաշրջանների գյուղական բնակավայրերում բնական հավելաճի գործակիցը կարող է լինել ցածր կամ նույնիսկ բացասական: ՀՀ հինգ տարածաշրջաններում, որոնք միասին ունեն թվով 119 գյուղական բնակավայր և մոտ 60 հազ. բնակչություն, բնական հավելաճի գործակիցը բացասական է՝ կազմելով –1,5÷–9,9‰ (աղյ. 2): Գյուղական բնակչության հավելաճի գործակիցը ցածր է նաև Ստեփանավանի, Գուգարքի, Եղեգնաձորի, Սիսիանի, Գորիսի և Նոյեմբերյանի տարածաշրջաններում: Դրանցում այն կազմում է 0,5–2,6‰:

Ամասիայի, Աշոցքի և Ախուրյանի տարածաշրջաններում գյուղական բնակչության բնական հավելաճը 2013 թ. 1,8–2,1 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: Մարզերից այդ առումով առանձնանում են Շիրակը, Գեղարքունիքը, Արմավիրը, Արագածոտնը և Արարատը: Դրանցում գյուղական բնակչության բնական հավելաճը ՀՀ միջին ցուցանիշից մեծ է 1,1–1,5 անգամ: Մնացած հինգ մարզերում գյուղական բնակչության բնական հավելաճի գործակիցը էականորեն պակաս է ՀՀ միջինից, մասնավորապես՝ Տավուշում 5,2 և Սյունիքում 11,8 անգամ:

Այսպիսով, վերլուծության արդյունքները ցույց են տալիս՝

1. վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի և վերարտադրության գործընթացներում տեղի են ունեցել նկատելի փոփոխությունները, որոնք առավել ինտենսիվ էին իննսունական թվականներից հետո՝ պայմանավորված երկրում կատարված քաղաքական, վարչական, տնտեսական և սոցիալ-մշակութային վերափոխումներով;

2. գյուղական բնակչության ծնելիության բացարձակ և հարաբերական ցուցանիշի նվազման պայմաններում տեղի է ունեցել մահացության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացումը, որը հանգեցրել է գյուղական բնակչության բնական հավելաճի կտրուկ նվազմանը հատկապես՝ 1990–2013 թթ. ընթացքում (1960–90 թթ. նվազել է՝ 1,9, 1990–2013 թթ.՝ 4,3 անգամ);

3. վերջին տարիներին գյուղական բնակչության բնական հավելաճի ավելացում տեղի է ունեցել հիմնականում ծնելիության ցուցանիշի ավելացման շնորհիվ, քանի որ մահացության գործակիցը ոչ միայն չի նվազել, այլ 2000 թ. համեմատությամբ ավելացել է 1,5‰-ով;

4. ՀՀ-ում կենտրոնական և առավել նպաստավոր աշխարհագրական դիրք, հիմնականում հարթավայրային մակերևույթ, ոռոգելի հողատարածքների և խոտհարքերի ու արոտավայրերի ավելի մեծ մակերես, ենթակառուցվածքային տարրերի ավելի բարձր ապահովվածություն և գյուղական բնակավայրերի համեմատաբար մեծ մարդաշատություն ունեցող մարզերում և տարածաշրջաններում 2005–2013 թթ. ընթացքում գյուղական բնակչության ծնելիության և բնական հավելաճի ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրվել, քան ծայրամասային և սահմանամերձ դիրք ու լեռնային բարդ մակերևույթ ունեցող մարզերում և տարածաշրջաններում;

5. ՀՀ մարզերի և տարածաշրջանների միջև գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների զգալիորեն մեծ տարբերություններ կան որոնք պայմանավորված են դրանց տարածքի աշխարհագրական դիրքով, բնատնտեսական առանձնահատկություններով և սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից իրավիճակով:

6. Գյուղական բնակչության մահացության գործակիցն առավել բարձր է այն տարածաշրջաններում և գյուղական համայնքներում, որտեղ հանրապետության համեմատ ցածր է ծնելիության գործակիցը, որը վկայում է այդ տարածաշրջանների գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների մասնաբաժնի ավելացման և երիտասարդ տարիքի բնակչության մասնաբաժնի նվազման մասին:

ՀՀ գյուղական բնակչության վերարտադրության շարժընթացի առկա միտումները և ժամանակակից վիճակը հղի են ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներով (բնակչության սեռատարիքային կառուցվածքի խախտում և ծերացում, գյուղական բնակավայրերի մեծ մասում բնակչության թվաքանակի նվազում և այլն) և կարող են պատճառ դառնալ ՀՀ մարզերում, տարածաշրջաններում և գյուղական բնակավայրերում տնտեսական և սոցիալական վիճակի էլ ավելի վատթարացման, ընդհուպ՝ առանձին գյուղերի վերացման:

Ստացվել է՝ 19.09.2014

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2013:
2. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Եր., 2013:
3. **Պոտոսյան Ա.Հ.** ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Եր., 2013:

А. А. ПОДОСЯН, А. Р. АКОПЯН

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ И ПРОБЛЕМЫ ЕСТЕСТВЕННОГО ДВИЖЕНИЯ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ РА

Резюме

Политические, экономические и социально-экономические перемены последних двух десятилетий привели к значительным изменениям в демографической ситуации, численности, структуре, размещении и расселении населения РА. Перечисленные проблемы выражены нагляднее в марзах и регионах РА, в частности в сельских поселениях. В статье рассматриваются особенности региональных изменений динамики воспроизводства сельского населения и возникшие проблемы за период с 2005 по 2013 годы.

A. H. POTOSYAN, A. R. HAKOPYAN

MODERN TENDENCIES AND PROBLEMS OF RURAL POPULATION DYNAMICS OF RA

Summary

Political, economic and social-cultural changes in RA during the last 20 years have caused significant changes in population number, structure, distribution, as well as demographic situation. They are more obvious in marzes and regions of RA, particularly, in rural settlements. In the article the population dynamics of rural population of RA, the features of regional changes and problems in 2005–2013 are analyzed.